

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխությունները 2000թ. ապրիլին, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Յուրակար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
Մարտ	99.6	101.7	101.0	100.1	100.1	96.8
Ապրիլ	99.2	98.5	100.0	100.0	89.6	98.1
2000թ. ապրիլը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	100.8	99.4*)	100.2	100.1	89.4*)	90.8*)
2000թ. հունվար-ապրիլը 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ	99.9	102.0	100.4	99.1	90.2	95.1

*) 2000թ. ապրիլի և 1999թ. դեկտեմբերի փաստացի գներով հաշված:
 1) Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:
 2) Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:
 3) Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:
 4) Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:
 5) Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:
 6) Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Սպառողական գներ. Ինչպես 2000թ. մարտին, այնպես էլ ապրիլին Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում արձանագրվել է սպառողական գների նվազման միտում, ինչի վրա իրենց ազդեցությունն են թողել պարենային ապրանքների գնային փոփոխությունները՝ պայմանավորված պարենային որոշ ապրանքատեսակների սեզոնայնությամբ, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխմամբ:

2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99,2 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 98,8 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.3 և ծառայությունների սակագներինը՝ 100.1 տոկոս:


Սպառողական գների ինդեքսը 2000թ. ապրիլին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 100,8 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 103,8 տոկոսի դիմաց: Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնաճը կազմել է 0,8 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 1,1, իսկ ծառայությունների սակագներինը՝ 0,4 տոկոս:

2000թ. հունվար-ապրիլին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0,2 տոկոս, ինչը 4,5 անգամ ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին ամսական հավելաճից (0,9 տոկոս):

2000թ. ապրիլին 1999թ. ապրիլի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99,1 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝


97,2 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 104,0 և ծառայությունների սակագներինը՝ 101,5 տոկոս, իսկ հունվար-ապրիլին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ համապատասխանաբար՝ 99,9 տոկոս, 98,5, 102.9 և 101,5 տոկոս:

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2000թ. հունվար-ապրիլին, տոկոսներով
(նախորդ տարվա դեկտեմբերը =100)



2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում գների արձանագրված 0,8 տոկոս նվազման դեպքում արտարժույթի շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքն ունեցել է 0,6 տոկոս հավելւած: Ապրիլին 1999թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 0,8 տոկոս գնաճի պայմաններում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1,3 տոկոս հավելւած: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում նշված ցուցանիշներն աճել են համապատասխանաբար՝ 3,8 և 3,4 տոկոսով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-ապրիլին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում 2000թ. ապրիլին շարունակվել է դեռևս նախորդ ամսին գրանցված գների նվազման միտումը՝ կազմելով 2,9 տոկոս (մարտին՝ 1,4 տոկոս, ապրիլին՝ 1,5 տոկոս): Հետագոտվող 14 կարևոր պարենային ապրանքախմբերից 11-ում նախորդ ամսվա համեմատ ապրիլին արձանագրվել է 8,8-0,1 տոկոս գների նվազում: Նվազման ամենաբարձր տոկոսը բաժին է ընկել բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբին, ինչը պայմանավորված է կանաչ սոխի (24,3 տոկոս), կաղամբի (15,2), սխտորի (13,6), գազարի (10,4), կարտոֆիլի (10,3), վարունգի (8,5), ճակնդեղի (6,9), լոլիկի (2,3) և գլուխ սոխի (1,0 տոկոս) գների նվազմամբ:

Դիտարկված բնակավայրերից 8-ում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 14,1-0,7 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է ք.Վանաձորում), իսկ ք.Վաղարշապատում և ք.Գյումրիում գրանցվել է համապատասխանաբար՝ 8,6 և 0,5 տոկոս գնաճ: Ք.Երևանում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 10,7 տոկոսով:

Մրգի գինը ապրիլին նախորդ ամսվա համեմատ նվազել է 1,3 տոկոսով, ինչը բացատրվում է տանձի (7,0 տոկոս), խնձորի (5,8) և ադամաթզի (3,3 տոկոս) գների նվազմամբ: Հանրապետությունում դիտարկված բնակավայրերից 5-ում գրանցվել է մրգի գնի 16,7-0,3 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է ք.Եղեգնաձորում), իսկ մյուս 5-ում՝ 3,5-8,2 տոկոս գնաճ:

Ձկնամթերքի ապրանքախմբում, ի տարբերություն նախորդ երկու ամիսների, արձանագրվել է գների նվազում՝ կազմելով 4,2 տոկոս, ինչը թարմ ձկան (սիգ) գնի 4,8 տոկոսով նվազման արդյունք է:

2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ 2,7-0,1 տոկոսով նվազել են ձվի, կենդանական և բուսական յուղի, կաթնամթերքի, շաքարավազի, սուրճի, թեյի, կակաոյի, հրուշակեղենի, հացամթերքի, ոչ ոգելից խմիչքի գները: Միաժամանակ 0,7 տոկոս գնաճ է արձանագրվել մսամթերքի ապրանքախմբում, ինչը պայմանավորված է խոզի (5,5 տոկոս), ոչխարի (1,2) և տավարի (0,9 տոկոս) մսի գնաճով: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 6-ում մսամթերքի գնաճը կազմել է 0,1-7,0 տոկոս (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Դիլիջանում), իսկ մյուս 4-ում գրանցվել է գների 0,9-0,4 տոկոս նվազում: Երևանում մսամթերքի գինը նվազել է 0,4 տոկոսով: 2000թ. ապրիլին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ մսամթերքի ընդհանուր գնաճը հանրապետությունում կազմել է 0,9 տոկոս:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում ընթացիկ տարվա ապրիլին մարտի համեմատ գնաճը կազմել է 0,1 տոկոս, ընդ որում, ծխախոտի գծով գրանցվել է 0,2 տոկոս գնաճ, իսկ ոգելից խմիչքի գները նվազել են 0,1 տոկոսով: 1999թ. դեկտեմբերի համեմատ ծխախոտի ընդհանուր գնաճը կազմել է 4,6 տոկոս:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(տոկոսներով)

	2000 թվական					2000թ. հունվար-ապրիլ 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	ապրիլը 2000թ. մարտի նկատմամբ	
	1999թ. դեկտեմբեր նկատմամբ					
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	102.7	103.0	102.0	100.8	98.8	98.5
Պարենային ապրանքներ	103.0	103.1	101.7	100.1	98.5	93.7
հացամթերք	100.2	99.8	99.2	98.9	99.7	97.4
մսամթերք	100.6	99.9	100.2	100.9	100.7	96.0
ձկնամթերք	94.2	95.9	104.9	100.6	95.8	99.8
կաթնամթերք	100.0	99.8	99.5	98.5	98.9	93.9
ձու	107.6	96.9	85.8	83.5	97.3	93.7
կենդանական և բուսական յուղ	99.9	98.9	95.5	94.2	98.6	89.5
միրգ	121.3	119.8	117.1	115.6	98.7	80.4
բանջարեղեն և կարտոֆիլ	122.7	133.3	131.1	119.6	91.2	89.6
շաքարավազ	97.2	95.1	91.4	90.6	99.1	83.4
սուրճ, թեյ, կակաո	99.7	98.3	95.6	94.9	99.3	94.2
հրուշակեղեն	100.0	99.6	98.4	98.1	99.6	96.7
ոչ ոգելից խմիչք	99.6	99.3	99.1	99.0	99.9	98.5
Ոգելից խմիչք և ծխախոտ	101.0	102.6	103.8	104.0	100.1	146.3

Ոչ պարենային ապրանքների գներ: 2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների 0,3 տոկոս գնաճին մեծապես նպաստել է հանրապետությունում բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 3,9 և 1,8 տոկոս գնաճը: Ապրիլին 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմել է 20,1 տոկոս, իսկ դիզելային վառելիքինը՝ 4,6 տոկոս: Գնաճ արձանագրվել է նաև գորգեղենի (1,4 տոկոս) և կահույքի (0,2 տոկոս) ապրանքախմբում: Տեքստիլեղենի և անձնապիտո ապրանքների գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ դիտարկված մյուս ապրանքախմբերում գրանցվել է 1,0-0,1 տոկոս գների նվազում:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

	2000 թվական					2000թ. հունվար-ապրիլ 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	ապրիլ 2000թ. մարտի նկատմամբ	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ					
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	99.7	99.1	100.8	101.1	100.3	102.9
հագուստ և կտորեղեն	99.5	98.6	98.4	98.2	99.7	96.1
վառելիք	100.5	101.5	100.3	99.3	99.0	112.4
կահույք	99.1	99.1	99.0	99.1	100.2	99.1
գորգեղեն	99.8	99.6	99.6	101.1	101.4	98.5
տեքստիլեղեն	99.0	98.5	97.9	97.9	100.0	92.4
խոհանոցային սպասք	99.7	99.3	99.2	99.0	99.8	97.3
լվացամիջոցներ	100.7	100.6	100.5	100.5	99.9	95.8
շինանյութեր	99.9	99.8	99.8	99.7	99.9	97.1
այգեգործական ապրանքներ	100.0	100.0	100.5	100.2	99.6	99.6
դեղամիջոցներ	99.2	99.2	98.9	98.6	99.7	89.7
մշակույթի ապրանքներ	99.6	99.0	99.0	98.7	99.7	94.0
գրեմական պիտույքներ	98.6	98.5	98.5	98.1	99.6	86.4
գեղահարդարման ապրանքներ	98.8	98.3	99.0	98.8	99.8	95.9
ոսկերչական ապրանքներ	101.4	100.3	100.2	99.7	99.5	93.2
անձնապիտո ապրանքներ	99.0	98.9	98.7	98.7	100.0	96.0

Ծառայությունների սակագներ: 2000թ. ապրիլին 1999թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0,4 տոկոս հավելաճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 14,0 տոկոս հավելաճի փոխարեն:

2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագների 0,1 տոկոս հավելաճը պայմանավորվել է մշակույթի (1,1 տոկոս), հանգստի (0,4), տրանսպորտի (0,2), առողջապահության (0,2), կրթության (0,1) և կենցաղային ծառայությունների (0,1 տոկոս) ոլորտներում արձանագրված սակագների հավելաճով: Միաժամանակ, կապի, հանրային սննդի, բնակարանային-կոմունալ, իրավական ու բանկային ծառայությունների գծով պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

	2000 թվական					2000թ. հունվար-ապրիլ 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	ապրիլ 2000թ. մարտի նկատմամբ	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ					
Ծառայություններ, ընդամենը	100.2	100.2	100.3	100.4	100.1	101.5
այդ թվում՝						
կենցաղային	100.3	100.3	100.4	100.5	100.1	100.7

	2000 թվական					2000թ. հունվար-ապրիլը 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	ապրիլը	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ				2000թ. մարտի նկատմամբ	
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
առողջապահության	102.1	102.1	102.1	102.2	100.2	104.2
տրանսպորտի	99.4	99.3	99.7	99.9	100.2	99.5
կապի	99.1	99.9	99.8	99.8	100.0	98.8
մշակույթի	96.9	99.3	99.3	100.5	101.1	108.2
կրթության	100.2	100.5	100.5	100.6	100.1	119.1
հանգստի	100.5	101.0	101.0	101.4	100.4	95.1
հանրային սննդի	101.6	101.5	101.5	101.6	100.0	101.3
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2000թ. ապրիլին մարտի համեմատ հետազոտված բնակավայրերիվ 7-ում սպառողական գները նվազել են 1,9-0,1 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է ք.Վանաձորում), իսկ մյուս 3-ում գրանցվել է 0,1-0,6 տոկոս գնաճ: Ք.Երևանում սպառողական գները նվազել են 1,0 տոկոսով:

Պարենային ապրանքների գծով ընթացիկ ամսում բացի ք.Վաղարշապատից, որտեղ գրանցվել է 1,8 տոկոս գնաճ, դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է գների 2,3-0,3 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է ք.Թալինում և ք.Վանաձորում):

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. ապրիլի 30-ի դրությամբ.

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ԳՅ, ընդամենը այդ թվում՝	1046	1274	1375	572	380	201	96	134	55	255
Երևան	1046	1346	1368	592	367	200	98	112	60	273
Գյումրի	1000	1200	1367	527	388	217	83	123	50	238
Վանաձոր	1000	1050	1325	540	340	190	90	230	25	220
Վաղարշապատ	1200	1300	1300	500	373	190	100	200	50	250
Թալին	1100	1200	1350	550	400	200	100	200	100	200
Դիլիջան	1100	1200	1400	550	450	200	100	150	60	200
Հրազդան, Չարենցավան	1000	1200	1350	600	400	200	100	150	50	200
Եղեգնաձոր	1100	1050	1400	500	350	200	100	150	90	300
Մարտունի	900	1200	1500	580	450	200	60	100	25	280
Կապան	1200	1100	1640	520	470	222	128	158	70	220

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2000թ. ապրիլի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5388 դրամ, ինչը 1,1 տոկոսով ցածր է նույնամյակում ապրանքատեսակների մարտի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5446 դրամ): Ընթացիկ ամսում մարտի նկատմամբ նշված պարենային ապրանքների միջին գները նվազել են 10,3-0,3 տոկոսով (բացառությամբ գլուխ սոխի, ինչի գնաճը կազմել է 5,5 տոկոս): Դիտարկված բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է ք.Վանաձորում (5010 դրամ), իսկ ամենաբարձրը՝ ք.Կապանում (5728 դրամ):

2000թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում դիտարկված բնակավայ-

րերից 8-ում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0,1-1,0 տոկոս գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք.Մարտունիում և ք.Դիլիջանում): Ք.Վաղարշապատում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ ք.Եղեգնաձորում արձանագրվել է գների 0,1 տոկոս նվազում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2000թ. ապրիլին հետազոտված բնակավայրերից 4-ում արձանագրվել է սակագների 0,1-2,7 տոկոս հավելաճ (համեմատաբար բարձր հավելաճ գրանցվել է ք.Եղեգնաձորում): Գյումրի, Կապան և Վանաձոր քաղաքներում սակագները նվազել են 0,6-0,1 տոկոսով, իսկ մյուս 3 բնակավայրերում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2000թ. ապրիլին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	100.8	100.8	100.8	100.1	101.1	100.4
<i>այդ թվում՝</i>						
Երևան	100.7	100.7	100.6	99.8	100.9	100.7
Գյումրի	102.3	102.7	103.0	103.3	101.6	99.3
Վանաձոր	99.6	99.5	98.9	98.6	101.8	100.4
Վաղարշապատ	101.9	102.2	102.3	102.3	101.6	99.9
Թալին	102.1	102.5	103.0	102.0	100.2	99.9
Դիլիջան	101.6	101.9	101.7	101.4	102.9	99.7
Չրազդան, Չարենցավան	98.7	98.4	98.3	96.8	98.9	100.1
Եղեգնաձոր	102.8	102.7	103.2	103.3	100.5	103.4
Մարտունի	100.4	100.3	99.8	99.4	102.7	100.6
Կապան	102.8	103.3	103.4	102.6	103.2	99.4

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2000թ. ապրիլին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 99,4 տոկոս, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 102,5 տոկոսի դիմաց:

Ընթացիկ ամսում մարտի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների 1,5 տոկոս նվազումը հիմնականում պայմանավորված է թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (17,1 տոկոս), էներգետիկայի (2,2) և հրատարակչական գործերի արտադրությունում (7,3 տոկոս) թողարկված արտադրանքի գների նվազմամբ: Միաժամանակ շինանյութերի, գունավոր մետալուրգիայի, սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի), մեքենաշինության արդյունաբերությունում արձանագրվել է 0,3-1,8 տոկոս գնաճ, իսկ քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական, ռադիոէլեկտրոնիկայի, անտառային, փայտամշակման և թղթ-ցելյուլոզի, թեթև արդյունաբերության ճյուղերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2000թ. ապրիլին նախորդ տարվա ապրիլի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 96,7 տոկոս:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2000թ. ապրիլին մարտի նկատմամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ոլորտում պահպանվել է սակագների կայուն մակարդակ: Երկաթուղային տրանսպորտում նախորդ ամսվա համեմատ

բեռնափոխադրումների սակագները մնացել են անփոփոխ: Օդային և ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագներն աճել են համապատասխանաբար՝ 2,2 և 0,6 տոկոսով, իսկ խողովակաշարային տրանսպորտում արձանագրվել է սակագների 0,2 տոկոս նվազում:

2000թ. ապրիլին նախորդ տարվա ապրիլի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 0,4 տոկոսով:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս: 2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ գյուղմթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 89,6 տոկոս, ընդ որում իրացման բոլոր ուղղություններով գրանցվել է գյուղմթերքների գների 11,6-4,2 տոկոս նվազում: Ընթացիկ ամսում դիտարկված մարզերից 9-ում արձանագրվել է գյուղմթերքների գների 31,6-3,2 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Արմավիրում), իսկ Արագածոտնում՝ 0,3 տոկոս գնաճ:

2000թ. մարտին գրանցված բուսաբուծական մթերքների իրացման գնաճին ապրիլին հաջորդել է գների 25,4 տոկոս նվազում, ինչը հիմնականում պայմանավորված է բանջարեղենի (31,1 տոկոս) իրացման գների նվազմամբ: Ընթացիկ ամսում անհատ քաղաքացիներին և շուկայում իրացված բուսաբուծական մթերքների գները նվազել են համապատասխանաբար՝ 27,4 և 15,9 տոկոսով, իսկ մթերող կազմակերպությունների գծով պահպանվել է իրացման գների նախորդ ամսվա մակարդակը:

Հանրապետության դիտարկված մարզերից 9-ում 2000թ. ապրիլին մարտի համեմատ բուսաբուծական մթերքների իրացման գները նվազել են 44,5-3,9 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է Արմավիրի մարզում), իսկ Վայոց Ձորում գրանցվել է 3,6 տոկոս գնաճ:

Անասնապահական մթերքների իրացման գների ընդհանուր մակարդակը 2000թ. ապրիլին մարտի համեմատ նվազել է 3,4 տոկոսով, ինչը պայմանավորված է իրացման բոլոր ուղղություններով գների 9,0-3,2 տոկոս նվազմամբ: Դրան մեծապես նպաստել է կաթնամթերքի (7,5 տոկոս), ձվի (4,5), կաշվեհումքի (9,4) և բրդի (18,7 տոկոս) ապրանքախմբերում գրանցված իրացման գների նվազումը:

2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 7-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 9,1-2,5 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Սյունիքում), իսկ մյուս 3 մարզերում դրանց գնաճը կազմել է 1,2-11,0 տոկոս:

2000թ. ապրիլին՝ 1999թ. ապրիլի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 84,9 տոկոս, այդ թվում բուսաբուծությանը՝ 66,7, անասնապահությանը՝ 94,1 տոկոս, իսկ հունվար-ապրիլին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 90,2 տոկոս, 79,5 և 96,7 տոկոս:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ մարզերի,

2000թ. ապրիլին (նախորդ ամիսը = 100,0)

(տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2000թ.ապրիլին 1999 թվականի		2000թ. ապրիլին 1999 թվականի	
	դեկտեմբերի նկատմամբ	ապրիլի նկատմամբ	դեկտեմբերի նկատմամբ	ապրիլի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	89.4	84.9	90.8	95.2
այդ թվում՝				

	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը 2000թ.ապրիլին 1999 թվականի դեկտեմբերի նկատմամբ		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը 2000թ. ապրիլին 1999 թվականի դեկտեմբերի նկատմամբ	
	դեկտեմբերի նկատմամբ	ապրիլի նկատմամբ	դեկտեմբերի նկատմամբ	ապրիլի նկատմամբ
Արագածոտն	96.0	94.1	99.2	94.5
Արարատ	80.3	106.1	98.5	82.4
Արմավիր	89.6	88.7	98.0	96.6
Գեղարքունիք	85.8	69.9	98.6	99.7
Լոռի	89.6	92.0	100.0	94.2
Կոտայք	85.1	83.2	95.2	88.4
Շիրակ	92.0	79.6	101.4	96.5
Սյունիք	92.8	93.3	103.9	103.4
Վայոց Ձոր	94.9	90.4	94.9	93.9
Տավուշ	99.2	99.4	103.6	96.4

2000թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 1,9 տոկոս նվազումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական մանր գործիքների (27,8 տոկոս), սերմացուների ու տնկիների (20,6 տոկոս), անասնակերի (1,9), էներգիայի և քսայուղերի (1,8 տոկոս) գնման գների նվազմամբ: Միաժամանակ 5,1-25,4 տոկոս գնաճ է գրանցվել բույսերի պաշտպանության միջոցների, անասունների, պարարտանյութերի, շինանյութերի ապրանքախմբերում և գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների ոլորտում, իսկ մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի գնման գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

2000թ. ապրիլին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված մարզերից 7-ում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 5,4-0,2 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Արարատում), իսկ մյուս 3-ում՝ 2,6-3,7 տոկոս գնաճ: